ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2020թ. N 226-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՌՈՒՇԱՆ ՄԿՐՏԻՉԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով և 48-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշման որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1016-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմում գործող Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների ուսումնասիրման հանձնաժողովի կողմից ս/թ օգոստոսի 11-ին կազմված բնակարանային պայմանների ուսումնասիրման վերաբերյալ արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Առուշան Մկրտիչի Այվազյանին ճանաչել բնակարանի կարիքավոր և վերցնել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

- Առուշան Մկրտիչի Այվազյանը ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորվել է 21.11.1992 թ.-ին և դարձել է 1-ին խմբի հաշմանդամ

- ներկա պահին բնակվում է Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասին 2-րդ շենքի N 57 բնակարանում, որի սեփականատերը նրա նախկին կինն է՝ Արմինե Սեյրանի Մովսիսյանը (ամուսնալուծվել են 2006 թվականին)

- Առուշան Մկրտիչի Այվազյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ. հիմք՝ ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 13.06.2020թ. N ԱՏ-11/06/2019-46-0001 տեղեկանք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2020թ. N 227-Ա

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին» N 6-Ն որոշման, հիմք ընդունելով Վահագն Արսենյանի՝ ս/թ օգոստոսի 7-ի դիմումը (մտից N 946)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Վահագն Արսենյանին տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:

2. Վահագն Արսենյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Արսենյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2020թ. N 228-Ա

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին» N 6-Ն որոշման, հիմք ընդունելով Վահագն Արսենյանի՝ ս/թ օգոստոսի 7-ի դիմումը (մտից N 947)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Վահագն Արսենյանին տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում անասնագոմ կառուցելու շինարարության թույլտվություն

2. Վահագն Արսենյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 7500(յոթ հազար հինգ հարյուր) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Արսենյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 օգոստոսի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2020թ. N 229-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1.2-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.08.2020 թվականի թիվ ՍՊ//23097-2020 հանձնարարականի պահանջները՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկի համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 6-ի N 136-Ա որոշման N 1 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1.2-1 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի քարտուղար) անձնագրում կատարել հետևյալ լրացումը՝ «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 12-րդ կետը լրացնել «է» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«է/ Բարեվարքության հարցերով կազմակերպիչն է՝ հետևյալ գործառույթներով՝

1) համայնքային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

3) համայնքի ղեկավարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

4) մշակում է համայնքային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում է հաստատման.

5) վարում է համայնքային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2020թ. N 230-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԴԵՎԱԶԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգի 16-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազի միջնակարագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Թունյանի՝ ս/թ օգոստոսի 13-ի գրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազի միջնակարագ դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատում իրականացնող հանձնաժողովի կազմում, որպես Ջերմուկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներ, ներառել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ Մեսրոպ Արամի Հարությունյանին և Նաիրի Վարզադատի Նիկալայանին:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ներկայացուցիչները մասնակցում են նաև տվյալ ուսումնական հաստատության արտաքին գնահատմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2020թ. N 231-Ա

«ԱԼՇԻՐՍՈՒՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ս.ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի նշանակությունը փոփոխելու կարգ»-ի 5-րդ կետի հիման վրա հարգել «Ալշիրսուր» ՍՊ ընկերության գործադիր տնօրեն Սոֆյա Հակոբյանի դիմումը. Ջերմուկի Շահումյան փողոցի 1-ին նրբանցք N 2/1 հասցեում գտնվող սեփական հասարակական նշանակության անշարժ գույքի՝ լվացքատան, գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելիի՝ առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխմամբ պայմանավորված փոխված համարել նաև այն սպասարկող հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատմանից բնակելի կառուցապատման: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Ալշիրսուր» ՍՊ ընկերությունը համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը՝ 1 քմ-ի համար 1242 դրամ հաշվարկով:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է «Ալշիրսուր» ՍՊ ընկերության գործադիր տնօրեն Սոֆյա Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2020թ. N 232

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԻԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշման, հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Լիլյա Կարապետյանի դիմում-հայտը (մտից՝ 1018, 2020 թվականի օգոստոսի 20) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Լիլյա Կարապետյանին տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 10):

2. Լիլյա Կարապետյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլյա Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

20 օգոստոսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2020թ. N 233-Ա

ԱՐՏԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Արտակ Մարկոսյանի 2020 թվականի օգոստոսի 19-ի հայտը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Արտակ Մարկոսյանին տալ կոյուղատարի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Արտակ Մարկոսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն: :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Մարկոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 21
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2020թ. N 234-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԽԱՉԻՁՈՐԻ ՓՈՂՈՑԻ N 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Խաչիձորի փողոցի N 4 հասցեում գտնվող 3000 քմ մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր) բաժանել երկու առանձին գույքային միավորների:

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները.

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Խաչիձորի փողոց N 4 -մակերեսը՝ 2000 քմ

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Խաչիձորի փողոց N 4/1 -մակերեսը՝ 1000 քմ

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2020թ. N 235-Ա

«ԱԼՇԻՐՍՈՒՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի նշանակությունը փոփոխելու կարգ»-ի 5-րդ կետի հիման վրա հարգել «Ալշիրսուր» ՍՊ ընկերության մասնակից Ալեքսի Կիրակոսյանի դիմումը. Ջերմուկի Շահումյան փողոցի 1-ին նրբանցք N 2 հասցեում գտնվող սեփական հասարակական նշանակության անշարժ գույքի՝ լվացքատան, գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելիի՝ առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխմամբ պայմանավորված փոխված համարել նաև այն սպասարկող հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատմանից բնակելի կառուցապատման: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Ալշիրսուր» ՍՊ ընկերությունը համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը՝ 1 քմ-ի համար 1242 դրամ հաշվարկով:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է «Ալշիրսուր» ՍՊ ընկերության մասնակից Ա. Կիրակոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանհաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 24
Ջերմուկ